

PARLIAMENT
MONITORING

ԱԶԳԱՅԻՆ
ԺՈՂՈՎԻ
ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

6-րդ ԳՈՒՄԱՐՈՒՄ | 2-րդ ՆԱՏԱՇՐՋԱՆ

1-ին ՁԵԿՈՒՅՑ



ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

6-րդ ԳՈՒՄԱՐՈՒՄ | 2-րդ ՆԱՏԱՇՐՁԱՆ
1-ին ՁԵԿՈՒՅՑ

Սույն զեկույցի թողարկումը հնարավոր է դարձել Բայ հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության օժանդակության շնորհիվ, դրամաշնորհ N 19730: Ձեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Բայ հասարակության հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության տեսակետներին և դիրքորոշումներին:



ՆԱԽԱԲԱՆ

«Մանդատ» ՀԿ-ն ներկայացնում է 6-րդ գումարման Ազգային ժողովի առաջին 2 նստաշրջանի գործունեության դիտարկման արդյունքները: Ամփոփումը կազմվել է լրագրողական դիտարկումների, փորձագիտական վերլուծությունների և parliamentmonitoring.am կայքի վիճակագրական ծրագրի տվյալների համադրմամբ:

Դիտարկման առանցքում եղել է կառավարման խորհրդարանական համակարգում Ազգային ժողովի նոր լիազորությունների, օրենսդրական և վերահսկողական գործառույթների իրացման արդյունավետությունը:

Ամփոփվել են 6-րդ գումարման առաջին 2 նստաշրջանի ընթացքում խորհրդարանի գործունեության ընդհանուր միտումներն ու սուբստանցիաները, ներկայացվել են տվյալներ ԱԺ խմբակցությունների օրենսդրական նախաձեռնությունների, ակտիվության մասին:

Անդրադարձ է կատարվել 6-րդ գումարման Ազգային ժողովում էթիկայի հանձնաժողովի ձևավորման, խորհրդարանական լսումների կազմակերպման իրավակարգավորման առանձնահատկություններին:

Հակիրճ ամփոփվել են նաև պաշտոնը ստանձնելու օրվա դրությամբ (2017թ. մայիսի 18) Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով ԱԺ պատգամավորների ներկայացրած գույքի և եկամուտների հայտարարագրերի հիմնական տվյալները:



ՑԱՆԿ

ԱԺ գործունեությունը՝ թվերով	4
Նախաձեռնողականություն, ակտիվություն	8
ԱԺ ներկայացուցչական և օրենսդրական գործառույթները խորհրդարանական նոր համակարգում. իրավասություններ և պրակտիկա	10
Էթիկայի հանձնաժողով. ինստիտուտի փաստացի դուրսմղումը խորհրդարանից	16
Խորհրդարանական լսումներ. իրավակարգավորման առանձնահատկությունները 6-րդ գումարման խորհրդարանում	18
Խորհրդարանական վերահսկողական գործառույթ	21
ԱԺ պարզամավորների 2017թ. գույքի և եկամուլների հայտարարագրերի տվյալների հակիրճ ամփոփում	26



6-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

6-րդ գումարման Ազգային ժողովը ձևավորվել է 2017թ. ապրիլի 2-ին կայացած ընտրությունների արդյունքում: Ընտրություններն անցկացվել են համամասնական ընտրակարգով: Խորհրդարանը կազմված է 105 պարզամավորից. 49-ն ընտրվել է կուսակցությունների փորձաքային, 52-ը՝ համապետական ընտրացուցակներով, 4-ը՝ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ են: Խորհրդարանում ներկայացված է 4 խմբակցություն՝ «Հանրապետական», «Հայ հեղափոխական դաշնակցություն», «Ծառուկյան» և «Ելք» :

ՀՀԿ-ն խորհրդարանում բացարձակ մեծամասնությունն է. ունի 58 պարզամավոր: «Ծառուկյան» խմբակցությունը կազմված է 31, «Ելք»-ը՝ 9, ՀՅԴ-ն՝ 7 պարզամավորից: 2017թ. մայիսի 11-ին ՀՀԿ-ն և ՀՅԴ-ն ստորագրել են հուշագիր քաղաքական կոալիցիա ձևավորելու մասին և միասին կազմել կառավարություն:

6-րդ գումարման Ազգային ժողովում 105 պարզամավորների կեսից ավելին՝ 54-ը, եղել է նաև 5-րդ գումարման խորհրդարանում: Նրանցից 35-ը ՀՀԿ-ում են, 14-ը՝ «Ծառուկյան», 2-ը՝ «Ելք», 3-ը՝ ՀՅԴ խմբակցություններում: Կանայք խորհրդարանում 19-ն են՝ նախորդի 15-ի փոխարեն:



ԱԺ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԹՎԵՐՈՎ

6-րդ գումարման Ազգային ժողովը 2017թ. ընթացքում գումարել է 2 հերթական, 2 արտահերթ նստաշրջան և 4 արտահերթ նիստ: Բոլոր արտահերթերը հրավիրվել են կառավարության նախաձեռնությամբ:

1-ին նստաշրջանում խորհրդարանն ընդունել է 34, 2-րդ նստաշրջանում 252 օրենք: Դրանցից 15-ը «մայր» օրենքներ են, 38-ը՝ միջազգային պայմանագրեր: 2017-ին ընդունված 286 օրենքներից 261-ի կամ շուրջ 90%-ի հեղինակը կառավարությունն է, 6-ինը՝ ԱԺ պարզամավորները, 19-ինը՝ կառավարությունն ու պարզամավորները համատեղ:


Ընդունված օրենքների գերակշիռ մասը՝ 90-ը, վերաբերել են տնտեսական և հարկային, 80-ը՝ պետաիրավական ոլորտներին:

2017թ. ընթացքում Ազգային ժողովը հաստատել է 2016թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը, ի գիտություն է ընդունել ԿԲ 2016թ. հաշվետվությունը և 2017թ. ծրագիրը, ՎՊ տարեկան հաշվետվությունը, ՀՈԱՀ-ի, ՀՀ դատախազության, ԿԸՀ-ի և ՄԻՊ-ի 2016թ. տարեկան հաղորդումները:




ԹՎԵՐԻ ՀԵՏԵՎՈՒՄ

- 6-րդ գումարման 2-րդ նստաշրջանի ընթացքում խորհրդարանն ընդունել է աննախադեպ մեծ թվով օրենքներ՝ 252: Սա շուրջ 3 անգամ ավելի է 5-րդ գումարման 2-րդ նստաշրջանի ցուցանիշից (94) և 2 անգամ ավելի, քան նախորդ գումարման բոլոր նստաշրջաններում ընդունված օրենքների միջին ցուցանիշը:



- Աժ նոր կանոնակարգ օրենքով եականորեն կրճատվել է օրենքների քննարկման ժամանակը: Սահմանվել է հարյի քննարկման հստակ փուլեր՝ 1 ժամ, առանձին դեպքերում 90 րոպե: Հիմնական և հարակից զեկուլոդներին հարյը ներկայացնելու համար փոքել է առավելագույնը 5 րոպե 4 անգամ ավելի քիչ, քան նախկինում: Հարյերին և պատասխաններին հարկապել է ընդամենը 1, ելույթներին՝ 2 րոպե՝ նախկին 10-ի փոխարեն:
- 6-րդ գումարման Աժ առաջին 2 նստաշրջանում օրենսդրական նախաձեռնությունների կառավարություն-Աժ հարաբերակցությունը գրեթե չի փոխվում նախորդ գումարման Աժ-ում արձանագրված պարկերից: 5-րդ գումարման Աժ 2-րդ նստաշրջանում կառավարության նախագծերի փեսակարար կշիռը կազմել է ընդհանուրի 94, իսկ 6-րդ գումարման երկրորդ նստաշրջանում 90%-ը: Անցումը խորհրդարանական համակարգին եական ազդեցություն այս հարաբերակցության վրա չի ունեցել:

Ընդունված օրենքներն՝ ըստ հեղինակների



- ▶ Փոխվել է արտահերթ նիստ-նստաշրջանների ընթացքում ընդունված օրինագծերի թիվը: Գրեթե յուրաքանչյուր երկրորդ օրենք 5-րդ գումարման ԱԺ-ն ընդունել է արտահերթ նստաշրջանում կամ նիստում, հրավիրողի սահմանած քննարկումների գերարագ ռեժիմով: 6-րդ գումարման խորհրդարանի առաջին 2 նստաշրջաններում արտահերթերի ընթացքում ընդունվել է օրենքների շուրջ 1/3-ը:
- ▶ Կառավարության նախաձեռնությամբ հրավիրված 2 արտահերթերի ընթացքում անցկացվել է ավելի քան 200 քվեարկություն: Դեկտեմբերի 12-14-ի արտահերթ նիստում ԱԺ-ն քվեարկել է 85, դեկտեմբերի 19-21-ի արտահերթ նիստում 135 օրենքի նախագիծ, այդ թվում Հարկային օրենսգրքում և 37 օրենքներում փոփոխություններ նախատեսող օրենսդրական փաթեթը:
- ▶ 2-րդ նստաշրջանում պարզամավորները հեղինակել են շուրջ 5 տասնյակ օրինագիծ, դրանց կեսից ավելին ընդդիմության նախաձեռնությունն է: 50 օրինագծերից 12-ն օրակարգում է, 28-ը դեռևս օրակարգ չի ընդգրկվել, 4-ի ընդգրկումը օրակարգ քվեարկությամբ մերժվել է, 1-ը՝ քննարկվել ու մերժվել, 6 օրինագիծ ընդունվել է:


Պարզամավորների օրինագծերն՝ ըստ կարգավիճակի



- ▶ Քննարկված և քվեարկությամբ մերժված միակ նախագիծը «Ելք»-ի նախաձեռնությունն է՝ ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցությունը դադարեցնելու հարցի շուրջ ԱԺ ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու մասին:
- ▶ ԱԺ որոշմամբ կրճատվել է ԱԺ մշտական հանձնաժողովների թիվը. նախկին 12-ի փոխարեն խորհրդարանում գործում է 9 մշտական հանձնաժողով: Միավորվել են պետաիրավական և մարդու իրավունքների, առողջապահության և սոցիալական, փարածքային կառավարման և բնապահպանության, գյուղատնտեսության հարցերի հանձնաժողովները:
- ▶ 2-րդ նստաշրջանում ԱԺ 9 մշտական հանձնաժողովներից առավելագույն թվով նիստեր՝ 21, հրավիրել է Կոնստանտին հարցերի մշտական հանձնաժողովը: Ամենաքիչը նիստ է հրավիրել Եվրոպական ինֆրագրաման հարցերի մշտական հանձնաժողովը (6):
- ▶ Ամենաշատ կողմ քվեարկած խմբակցությունը ՀՀԿ-ն է: Ամենաշատ ձեռնպահ է քվեարկել «Ծառուկյան» խմբակցությունը, ամենաշատ դեմ քվեարկածը «Ելք»-ն է: «Ելք»-ը նաև ամենաակտիվ խմբակցությունն է:

ԱԺ խմբակցությունների քվեարկությունները (հունիս –դեկտեմբեր, 2018թ.)

■ ՀՀԿ ■ ՀՅԴ
■ ԾԱՌ ■ ԵԼՔ



- ▶ «Ելք»-ի պարզամավորներից յուրաքանչյուրը միջինը հնչեցրել է 30 հարց ու ելույթ: «Ծառուկյան» խմբակցության նույն ցուցանիշը 10 է, ՀՀԿ-ական պարզամավորներինը՝ 5, ՀՅԴ-ինը՝ 1:
- ▶ 6-րդ գումարման ԱԺ-ում պահպանվում է «լուռ» պարզամավորների թիվը: 105 պարզամավորից 40-ը 2 նստաշրջանում քննարկման չի մասնակցել և միայն քվեարկել է: 31 հոգանոց «Ծառուկյան» խմբակցության 14 պարզամավոր ԱԺ լիագումար նիստերին հարց չի փոխել, ելույթ չի ունեցել: 58 հոգանոց ՀՀԿ խմբակցությունում ամբիոնին և խոսափողին չմոտեցած պարզամավորների թիվը 26 է:

- ▶ 6-րդ գումարման Ազգային ժողովի 2-րդ նստաշրջանում էթիկայի հանձնաժողով չի ձևավորվել, թեև 1 առաջարկ եղել է: «Ելք» խմբակցությունն առաջարկել է ստեղծել հանձնաժողով՝ ՀՀԿ խմբակցության անդամ Արտաշես Գեղամյանի և «Ելք» խմբակցության ղեկավար Նիկոլ Փաշինյանի միջև հոկտեմբերի 5-ին խորհրդարանի միջանցքում տեղի ունեցած միջադեպը քննելու համար: Հարցի քննարկումը հետաձգվել է:
- ▶ Ազգային ժողովի 6-րդ գումարման առաջին 2 նստաշրջանում անցկացվել է 8 խորհրդարանական լսում: Լսումներ է կազմակերպել 9 հանձնաժողովից 5-ը: Առողջապահության և սոցիալական, պետաիրավական, տնտեսական, ֆինանսավարկային և բյուջետային հարցերի հանձնաժողովները 2 նստաշրջանի ընթացքում լսումներ չեն կազմակերպել:
- ▶ 2017թ. մայիսի 18-ի դրությամբ ԱԺ պարզամավորները միասին հայտարարագրել են՝ 29.4 մլրդ դրամ կամ 60.9 մլն դոլար: Ազգային արժույթով դրամական միջոցները կազմում են ընդհանուրի մեկ քառորդը: ԱԺ 101 պարզամավորների հայտարարագրած ընդհանուր դրամական միջոցների 99.5%-ը բաժին է ընկնում ՀՀԿ և «Ծառուկյան» խմբակցություններին:
- ▶ ՀՀԿ-ի դրամական միջոցները ավելի շատ են, քան «Ծառուկյան» դաշինքինը՝ 15.4 մլրդ դրամ 13.9 մլրդ դրամի դիմաց: ՀՅԴ խմբակցության դրամական միջոցները 189.4 մլն դրամ են, «Ելք»-ինը՝ 35.4 մլն դրամ:
- ▶ Ամենից շատ դրամական միջոցներ հայտարարագրած պարզամավորը, ինչպես և նախորդ գումարման խորհրդարանում, Գագիկ Ծառուկյանն է՝ 9 մլրդ 90 մլն դրամ կամ 18.8 մլն դոլար: Երկրորդը ՀՀԿ-ական Սամվել Ալեքսանյանն է (4 մլրդ 249.8 մլն դրամ կամ 8.8 մլն դոլար), երրորդը՝ Աշոտ Արսենյանը (3 մլրդ 679.4 մլն դրամ կամ 7.6 մլն դոլար):
- ▶ Ըստ հայտարարագրած դրամական միջոցների՝ ԱԺ-ում կա 11 դոլարային միլիոնատեր: Նրանցից 6-ը ՀՀԿ-ից են, 5-ը՝ «Ծառուկյան» խմբակցությունից: Հայտարարագիր լրացրած 101 պարզամավորից 26-ը հայտարարագրել է զրոյական դրամական միջոց:



ՆԱԽԱԶԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀԿ խմբակցություն. 6-րդ գումարման առաջին 2 նստաշրջանի ընթացքում ՀՀԿ-ն հեղինակել է 24 օրենքի նախագիծ: Դրանցից 6-ն ընդգրկված է օրակարգ, 12-ը շրջանառության մեջ է: Ընդունվել է ՀՀԿ-ի հեղինակած 6 օրենքի նախագիծ, ՀՀԿ-ն համահեղինակ է կառավարության ներկայացրած և ընդունված 19 օրենքի նախագծի:

Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության՝ 6-րդ գումարման Ազգային ժողովում 2017 թվականի ընթացքում ՀՀԿ խմբակցության ամենաշատ հարց տված (15) և ելույթ ունեցած (13) պարզամավորը Խոսրով Հարությունյանն է: Ամենաշատը՝ 257 անգամ, կողմ է քվեարկել Ավետ Սարգսյանը, ամենաքիչ կողմ քվեարկածը Սեյրան Սարոյանն է (95): Ամենաշատ դեմ 6 անգամ, քվեարկել է ՀՀԿ 9 պարզամավոր: Ձեռնպահ՝ 1 անգամ, քվեարկել է 4 պարզամավոր: Ամենաշատը բացակայել է Սամվել Ֆարմանյանը(119):

Նստաշրջանի ընթացքում ամենաշատ կողմ քվեարկածների տասնյակը կազմված է միայն ՀՀԿ-ականներից: Ամենաշատ դեմ, ձեռնպահ քվեարկածների տասնյակներում հանրապետականներ չկան: Ամենաշատ բացակայածների տասնյակում

ՀՀԿ-ից 4-ն են՝ Սամվել Ֆարմանյան, Հերմինե Նաղդալյան, Արմեն Աշոտյան, Արփինե Հովհաննիսյան: Խոսքով Հարությունյանն ու Արաիկ Հովհաննիսյանը եզրափակում են նստաշրջանի ընթացքում ամենաշատ հարց փակած, Էդուարդ Շարմազանովն ու Հրայր Թովմասյանն էլ՝ ամենաշատ ելույթ ունեցած պարզամավորների փասնյակները:

«Ծառուկյան» խմբակցություն. 6-րդ գումարման առաջին 2 նստաշրջանի ընթացքում «Ծառուկյան» խմբակցությունը հեղինակել է 15 օրենսդրական նախաձեռնություն: Դրանցից 2-ն ընդունվել է, 2-ի ընդգրկումը օրակարգ՝ մերժվել: Խմբակցության 2 նախագիծ նստաշրջանի օրակարգում է, 9-ը՝ շրջանառության մեջ:

Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության՝ 6-րդ գումարման Ազգային ժողովում 2017 թվականի ընթացքում «Ծառուկյան» խմբակցության պարզամավորներից ամենաշատը հարց փակել է Սերգեյ Բագրատյանը(46), ամենաշատը ելույթ է ունեցել Միքայել Մելքումյանը(38): Ամենաշատ կողմ քվեարկած պարզամավորը Կարինե Պողոսյանն է(198), դեմ քվեարկածը՝ Վահե Էնֆիաջյանը(29), ձեռնպահ՝ Վահան Կարապետյանը(12):

Գագիկ Ծառուկյանը գլխավորում է ամենաշատ բացակայած պարզամավորների փասնյակը: Այս փասնյակում է «Ծառուկյան» խմբակցության ևս 2 պարզամավոր: Ամենաշատ ձեռնպահ քվեարկածների փասնյակն ամբողջությամբ կազմված է «Ծառուկյան» խմբակցության պարզամավորներից: Ամենաշատ հարց փակած պարզամավորների փասնյակում են Բագրատ Սարգսյանը, Միքայել Մելքումյանը, Վարդան Բոստանջյանը և Նաիրա Զոհրաբյանը: Նստաշրջանի ընթացքում ամենաշատ ելույթ ունեցածների փասնյակը գլխավորում է Միքայել Մելքումյանը:

«Ելք» խմբակցություն. 6-րդ գումարման առաջին 2 նստաշրջանի ընթացքում «Ելք» խմբակցությունը հեղինակել է 11 օրենսդրական նախագիծ: Դրանցից 4-ն ընդգրկված է նստաշրջանի օրակարգ, 4-ը շրջանառության մեջ է: Խմբակցության 1 նախագիծ չի ընդունվել, 2-ի ընդգրկումը օրակարգ մերժվել է:

Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության՝ 6-րդ գումարման Ազգային ժողովում 2017 թվականի ընթացքում «Ելք» խմբակցության ամենաշատ կողմ քվեարկած պարզամավորը Նիկոլ Փաշինյանն է (160): Ամենաշատը դեմ է քվեարկել Լենա Նազարյանը (56), նա գլխավորում է նստաշրջանի՝ ամենաշատ դեմ քվեարկած պարզամավորների փասնյակը, որպեսզի 8-ը «Ելք»-ի անդամ են: Այս փասնյակում «Ելք»-ից ընդգրկված չէ միայն Էդմոն Մարուքյանը. նա խմբակցության ամենաշատ բացակայած պարզամավորն է (123): Արտակ Ջեյնալյանը խմբակցության ամենաշատ հարց փակած (61) և ելույթ ունեցած (33) պարզամավորն է: Նա գլխավորում է խորհրդարանի ամենաշատ հարց փակած ու ելույթ ունեցած պարզամավորների փասնյակը: «Ելք»-ից այս փասնյակում են նաև Մանել Թանդիլյանը, Նիկոլ Փաշինյանը և Գևորգ Գեորգիսյանը: Նրանք ընդգրկված են նաև ամենաշատ ելույթ ունեցած պարզամավորների փասնյակում:

ՀՅԴ խմբակցություն. 6-րդ գումարման առաջին 2 նստաշրջանի ընթացքում ՀՅԴ-ն հեղինակել է 4 օրենքի նախագիծ, 1-ը՝ ՀՀԿ-ի հետ միասին:

Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության՝ 6-րդ գումարման Ազգային ժողովում 2017 թվականի ընթացքում ՀՅԴ խմբակցության ամենաշատ հարց փակած (5) և ելույթ ունեցած (4) պարզամավորը Արմենուհի Կյուրեղյանն է: Ամենաշատը կողմ (237) քվեարկել են Ռոմիկ Մանուկյան ու Անդրանիկ Կարապետյանն, վերջինը նաև ամենաշատ դեմ (3) քվեարկած պարզամավորն է: ՀՅԴ խմբակցության 7 պարզամավորից 6-ը 3 անգամ քվեարկել է ձեռնպահ: Ամենաշատը բացակայել է Արմեն Ռուստամյանը (95):

Նստաշրջանի ընթացքում ամենաշատ կողմ, դեմ, ձեռնպահ քվեարկածների, հարց փակած և ելույթ ունեցած պարզամավորների փասնյակներում ՀՅԴ պարզամավոր չկա:



ԱԺ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ և ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ. ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ՊՐԱԿՏԻԿԱ

2016թ. դեկտեմբերի 6-ի սահմանադրական փոփոխություններով Հայաստանը կառավարման կիսանախագահական համակարգից անցում կատարեց խորհրդարանական մոդելի:

Իրավական տեսանկյունից խորհրդարանական կառավարման համակարգը ստեղծում է իշխանությունների հակակշռման և հավասարակշռման սկզբունքի իրացման նպաստավոր պայմաններ: Դասական պառլամենտարիզմի պարագայում կառավարությունն ամբողջությամբ հաշվեպարտ է խորհրդարանին, նրանով միջնորդավորված հասարակությանը: Խորհրդարանը, ունենալով վարչապետ ընտրելու և կառավարություն ձևավորելու, բարձրագույն մարմինների ղեկավար կազմելու, նաև դատական իշխանությունում նշանակումներ կատարելու բացառիկ իրավունք, դառնում է հանրային վերահսկողությունն ապահովող գլխավոր մարմինը:

Փոփոխված Սահմանադրությունն ընդլայնել է խորհրդարանի գործառույթների ու լիազորությունների շրջանակը: Այդ ընդլայնումն ապահովող դրույթների մի մասն ուժի մեջ է մտել 6-րդ գումարման Ազգային ժողովի առաջին նստաշրջանից: Մասնավորապես, գործողության մեջ են այն հոդվածները, որոնք վերաբերում են ԱԺ-ի ընտրության կարգին, կարգավիճակին, լիազորությունների ժամկետներին, հերթական ու արտահերթ նստաշրջանների, նիստերի անցկացմանը, Ազգային ժողովի ղեկավար կազմին, խորհրդին, օրենքների, որոշումների, հայտարարությունների եւ ուղերձների ընդունմանը և այլն:

Պառլամենտական համակարգում սկզբունքային նշանակություն ունեցող մյուս խումբ լիազորություններն ուժի մեջ կմտնեն 2018թ. ապրիլից՝ հանրապետության նախագահի պաշտոնն ստանձնելուց հետո: Դրանց մեծ մասը վերաբերում է այն լիազորություններին, որոնք նախագահական ինստիտուտի փոխանցվում են խորհրդարանին կամ կառավարությանը:

6-րդ գումարման խորհրդարանը փաստացի ստացել է քաղաքական, օրինաստեղծ, վերահսկողական և ներկայացուցչական մի քանի նոր առանցքային գործառույթներ:

- ▶ Խորհրդարանին վերապահվել է իրավունք՝ փոփոխություններ կատարելու ՀՀ Սահմանադրության բազմաթիվ հոդվածներում. նախորդ երկու Սահմանադրություններով հիմնական օրենքում փոփոխություններ կատարելը կամ նոր Սահմանադրության ընդունումը բացառապես վերապահված էր ժողովրդին, որը վերջինս իրականացնում էր միայն հանրաքվեի միջոցով: Բացառությամբ մի քանի հոդվածների՝ մայր օրենքում խորհրդարանը կարող է փոփոխություններ կատարել պարզամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով: ԱԺ-ում ուժերի հարաբերակցությունը քաղաքական մեծամասնությանը թույլ է տալիս Սահմանադրության համապատասխան հոդվածներում փոփոխություններ կատարել՝ առանց ընդդիմության հետ փոխզիջումների:

- ▶ Ներդրվել է նոր ինստիտուտը՝ Ազգային ժողովի խորհուրդը, որը կազմված է ԱԺ նախագահից, նրա երեք փոխնախագահներից, խմբակցությունների մեկական ներկայացուցիչներից եւ մշտական հանձնաժողովների նախագահներից: Խորհուրդն օժտված է ԱԺ նստաշրջանների և նիստերի օրակարգերի, դրանում ընդգրկված հարցերի քննարկման հերթականության որոշման, ընդհուպ պարզամավորի լիազորությունները դադարեցնելու հարցով ՍԴ դիմելու և մի քանի այլ կազմակերպական լիազորություններով: Նախկինում այդ գործառույթներով օժտված էր ԱԺ նախագահը՝ միանձնյա:
- ▶ 7 օրենք՝ Ազգային ժողովի կանոնակարգը, Ընտրական օրենսգիրքը, Դատական օրենսգիրքը, Սահմանադրական դատարանի մասին օրենքը, Հանրաքվեի մասին օրենքը, Կուսակցությունների մասին օրենքը եւ Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքը, ստացել են սահմանադրական օրենքների կարգավիճակ: Մնացած օրենքները պետք է Սահմանադրությունից բացի համապատասխանեն նաև սահմանադրական օրենքներին: Վերջիններս կամ դրանցում փոփոխություններ կատարելուն ուղղված նախագծերն ընդունվում են քվեարկությանը մասնակցող պարզամավորների 3/5-ով պարզ մեծամասնության փոխարեն: Այս սահմանադրական դրույթն ուղղված է խորհրդարանական քաղաքական ուժերի միջև կոնսենսուսի ձեռքբերման նախադրյալների ստեղծմանը:
- ▶ Բացի կառավարությունից և պարզամավորներից՝ օրենսդրական նախաձեռնության իրավունք է վերապահվել նաև խմբակցությանը, ինչպես նաև ընտրական իրավունք ունեցող առնվազն 50 հազար անձի՝ համապատասխան նախաձեռնություն ցուցաբերելու դեպքում: Այն պառլամենտի օրինաստեղծ գործընթացում հանրային մասնակցայնության երաշխավորման կառուցակարգ է:
- ▶ Ազգային փոքրամասնությունները Սահմանադրության ուժով հստակ քվոտայով երաշխավորված ներկայություն ունեն Ազգային ժողովում՝ այդ իրավունքն իրացնելով խորհրդարանական խմբակցություններում ներգրավվածությամբ: Նորանկախ Հայաստանի պառլամենտարիզմի պարմության մեջ առաջին անգամն է, որ ազգային փոքրամասնությունները ԱԺ-ում ներկայացվածության քվոտավորված մանդատներ են ստանում:
- ▶ Ըստ Սահմանադրության՝ Ազգային ժողովը կազմավորվում է բացառապես համամասնական ընտրակարգով. նախորդ Սահմանադրությամբ ընտրության կարգը սահմանվում էր օրենքով, որը նախատեսել էր խառը՝ մեծամասնական-համամասնական ընտրակարգ:
- ▶ Նախորդ գումարման ԱԺ մեծամասնությունը, որպես համամասնական ընտրակարգի յուրաքանչյուր դրսևորում, նոր Ընտրական օրենսգրքով նախատեսեց նաև փարածքային ցուցակներով ռեյտինգային ընտրության ինստիտուտը՝ թաքնված կերպով շարունակելով պահպանել նախկին մեծամասնական ընտրակարգի հիմնական փարբերը: 6-րդ գումարման ԱԺ-ն 50%-ով ձևավորվեց այս ընտրակարգով, ի փարբերություն նախորդի, որտեղ մեծամասնական ընտրակարգով ընտրվել էր պարզամավորների ընդամենը 1/3-ը:

Չնայած պառլամենտարիզմի էությունից բխող այս նորամուծություններին, էականը ոչ թե դրանց իրավական ամրագրումն է, այլ՝ կիրառումը: Այս իմաստով առաջին 2 նստաշրջանում արձանագրված միտումներն այնքան հուսադրող չեն, որքան ենթադրվում էր պառլամենտական համակարգի ներդրման անհրաժեշտությունը հիմնավորելիս:

Օրինաստեղծ գործառույթի խորհրդարանի օտարվածության պրակտիկան չի փոխվում

6-րդ գումարման ԱԺ առաջին 2-րդ նստաշրջանի ընթացքում օրենսդրական նախաձեռնությունների կառավարություն-ԱԺ հարաբերակցությունը գրեթե չի փարբերվում նախորդ գումարման ԱԺ-ում արձանագրված պարկերից:

5-րդ գումարման ԱԺ 2-րդ նստաշրջանում կառավարության նախագծերի տեսակարար կշիռը կազմել է ընդհանուրի 94, իսկ 6-րդ գումարման երկրորդ նստաշրջանում 90%-ը: Անցումը խորհրդարանական համակարգին էական ազդեցություն այս հարաբերակցության վրա դեռևս չի ունեցել. դե յուրե դառնալով քաղաքական իշխանության հիմնական մարմինը՝ ԱԺ-ն շարունակում է օտարված մնալ օրինաստեղծ գործառույթից:

Պարճառներից մեկն այն է, որ 6-րդ գումարման ԱԺ-ն 1-ին և 2-րդ նստաշրջանների ընթացքում գործել է օրենսդրությունը մայր օրենքին համապատասխանեցնելու «արտակարգ ռեժիմով»: Կառավարությունը, սահմանված ժամկետներում գործընթացն ավարտին հասցնելու նկատառումով, առավել ակտիվ և նախաձեռնողական է եղել նախագծեր ներկայացնելու հարցում, իսկ ԱԺ մեծամասնությունը առաջնահերթորեն հենց այդ օրինագծերն է օրակարգ ընդգրկել ու քննարկել:

Մյուս կողմից՝ պահպանվել է ԱԺ քաղաքական մեծամասնության մերժողական վերաբերմունքը փոքրամասնության օրենսդրական նախաձեռնությունների նկատմամբ:

2-րդ նստաշրջանի ընթացքում ԱԺ պարզամավորները հեղինակել են շուրջ 5 տասնյակ օրինագիծ, դրանց կեսից ավելին ընդդիմության նախաձեռնությունն է: Նախագծերից 28-ը դեռևս օրակարգ չի ընդգրկվել, 4-ի ընդգրկումը օրակարգ քվեարկությամբ մերժվել է, 1-ը՝ քննարկվել ու մերժվել: Մերժված բոլոր օրինագծերի հեղինակները ընդդիմադիր խմբակցությունների պարզամավորներն են:

Արտահերթ նիստ-նստաշրջանների ազդեցությունը օրենսդրական գործընթացի վրա

6-րդ գումարման ԱԺ-ն առաջին և երկրորդ նստաշրջաններին զուգահեռ գումարել է 4 արտահերթ նիստ և 2 արտահերթ նստաշրջան: Բոլոր արտահերթերը հրավիրվել են կառավարության նախաձեռնությամբ:

Նախորդ գումարման համեմատ փոխվել է արտահերթ նիստ-նստաշրջանների ընթացքում ընդունված օրինագծերի թիվը: Գրեթե յուրաքանչյուր երկրորդ օրենք 5-րդ գումարման ԱԺ-ն ընդունել է արտահերթ նստաշրջանում կամ նիստում, հրավիրողի սահմանած՝ քննարկումների գերարագ ռեժիմով: 6-րդ գումարման խորհրդարանի առաջին 2 նստաշրջանում այս միտումը փոխվել է. արտահերթերի ընթացքում ընդունվել է օրենքների շուրջ մեկ երրորդը, ինչը, սակայն, չի փոխել նախագծերի քննարկման բովանդակությունը: Դրան նպաստել են նաև հարցերի քննարկման համար ԱԺ կանոնակարգ օրենքով սահմանված նոր ընթացակարգերը:

Քննարկումների արագացված ռեժիմի լեգիտիմացումը

ԱԺ նախորդ կանոնակարգօրենքի համաձայն՝ ԱԺ լիագումար նիստում հարցի զեկուլցմանը հատկացվում էր մինչև 20, հարցերին և պատասխաններին՝ մինչև 3, ելույթներին՝ մինչև 10 րոպե: Նոր կանոնակարգով սահմանվում է հարցի քննարկման հստակ տևողություն՝ 1 ժամ, առանձին դեպքերում 90 րոպե: Հիմնական և հարակից զեկուլցողներին հարցը ներկայացնելու համար տրվում է առավելագույնը 5 րոպե, այսինքն 4 անգամ ավելի քիչ, քան նախկինում: Հարցերին և պատասխաններին հատկացվում է ընդամենը 1, ելույթներին՝ 2 րոպե՝ նախկին 10-ի փոխարեն:

Սահմանվել է նաև, որ նախագծերի շուրջ հարցուպատասխանը, անկախ հարցերի քանակից, չի կարող գերազանցել 10 րոպեն, իսկ ելույթների ընդհանուր տևողությունը՝ 40 րոպեն: Այսինքն, որքան մեծ է հարցերի և ելույթների համար հերթագրված պատգամավորների թիվը, այնքան նրանցից յուրաքանչյուրն ավելի քիչ արտահայտվելու ժամանակ է ստանում, քանի որ սահմանված ընդհանուր ժամանակահատվածը հավասարաչափ բաշխվում է նրանց միջև:

Փաստացի ներդրվել է քննարկումների ընթացակարգ, որը

- ▶ խրախուսում է հնարավորինս քիչ հարցերով և ելույթներով հանդես գալու մոտեցումը,
- ▶ կրճատում է օրինագծերի քննարկման ընթացքը՝ գործնականում այն վերածելով մեխանիկական պրոցեսի,
- ▶ զրկում է պատգամավորներին և հատկապես քաղաքական փոքրամասնությանն ԱԺ լիազումար նիստում հիմնավորված ներկայացնել իր առարկություններն ու առաջարկությունները:

Մյուս կողմից՝ նոր կարգը մեծացնում է ԱԺ մշտական հանձնաժողովների դերակատարությունը՝ քննարկումների առյուծի բաժինը տեղափոխելով հրապարակայնության համեմատաբար ավելի ցածր մակարդակ ունեցող հանձնաժողովային փիրույթ: Արդյունքում հանձնաժողովում աշխատանքը դառնում է ավելի կարևոր ու մասնակցային, քան՝ ԱԺ լիազումար նիստում:

ԱԺ նոր կանոնակարգով նաև սահմանվում է, որ բոլոր օրենքներն ընդունվում են 2 ընթերցմամբ: Փաստացի, չեն տարբերակվում մայր օրենքի և փոփոխություն նախատեսող նախագծերի քննարկման ընթացակարգերը: Մինչդեռ նախորդ կանոնակարգով մայր օրենքն ընդունվում էր 3 ընթերցմամբ:

Եթե նախորդ գումարման ԱԺ-ում քննարկումների չսահմանափակվող տևողությունը երկարաձգում էր խորհրդարանի աշխատանքը, ապա նոր փոփոխությունները հանգեցրել են հակառակ ծայրահեղության՝ նույնը թողնելով վերջնարդյունքը:

Խորհրդարանական «լուռ քվեարկողների» բալաստը

6-րդ գումարման Ազգային ժողովում պահպանվում է «լուռ» պատգամավորների թիվը: Գործող խորհրդարանը գրեթե նույնությամբ կրկնում է 5-րդ գումարման խորհրդարանի պատկերը: 105 պատգամավորից 40-ը 2 նստաշրջանում որևէ քննարկման չի մասնակցել: 31 հոգանոց «Ծառուկյան» խմբակցության 14 պատգամավոր կամ խմբակցության 45%-ը ԱԺ լիազումար նիստերին հարց չի փվել, ելույթ չի ունեցել: 58 հոգանոց ՀՀԿ խմբակցությունում ամբիոնին և խոսափողին չմոտեցած պատգամավորների թիվը 26 է կամ խմբակցության 45 %-ը: Ընդհանուր առմամբ՝ խորհրդարանի շուրջ 38%-ը (նրանք ճնշող մեծամասնությամբ փարածքային ցուցակներով ընտրված պատգամավորներն են) միայն քվեարկել է, ինչը չի բխում խորհրդարանական կառավարման համակարգի տրամաբանությունից:

Խորհրդարանական ընդդիմության նոր իրավունքները և դրանց իրացումը

Սահմանադրությունը և Ընտրական օրենսգիրքը երաշխավորում են խորհրդարանում քաղաքական փոքրամասնության նվազագույնը 1/3 ներկայացվածություն, թեպետ նույն Սահմանադրությունը և Ընտրական օրենսգիրքը սահմանում են նաև, որ խորհրդարանը պետք է ունենա կայուն մեծամասնություն: Սա փոքրացնում է խորհրդարանում 1/3-ով ներկայացված ընդդիմության ազդեցությունը քաղաքական որոշումների վրա:

Աժ 4 քաղաքական ուժերից 2-ը՝ ՀՀԿ-ն և ՀՅԴ-ն, կազմելով քաղաքական կոալիցիա և ստանձնելով կառավարության ձևավորման ու գործունեության պատասխանատվությունը, ըստ Աժ կանոնակարգի՝ «կառավարող» խմբակցություններ են, իսկ այս գործընթացից դուրս մնացած մյուս 2 ուժերը՝ «Ելք»-ը և «Ծառուկյան»-ը՝ ընդդիմադիր¹: Կոալիցիոն և ընդդիմադիր պարզամավորների թվային հարաբերակցությունը 60/45 է, տոկոսայինը՝ 57/43:

6-րդ գումարման խորհրդարանում որոշակիորեն մեծացել է ընդդիմության ներկայացուցչական դերակատարությունը: Աժ քաղաքական փոքրամասնությունն ստացել է Աժ փոխնախագահ ունենալու օրենքով սահմանված իրավունք, 9 մշտական հանձնաժողովներից 3-ի նախագահները ընդդիմադիր խմբակցության ներկայացուցիչներ են:

Ընդդիմությունն ստացել է նաև Աժ նստաշրջանների և նիստերի օրակարգերի, հարցերի քննարկման հերթականության որոշմանը մասնակցելու, նաև պարզամավորի լիազորությունները դադարեցնելու հարցով ՍԴ դիմելու իրավունք: Դա ապահովվում է նոր ինստիտուտում Ազգային ժողովի խորհրդում, ընդդիմության ներկայացվածությամբ: 17 անդամ ունեցող խորհրդի կազմում են «Ծառուկյան» խմբակցության 5 և «Ելք»-ի 1 ներկայացուցիչ:

Ստեղծվել են իրավական մեխանիզմներ՝ պետական առանցքային մարմինների ղեկավար կազմերի ընտրության կամ նշանակման հարցում Աժ քաղաքական փոքրամասնության դերակատարումն ավելի գործնական դարձնելու համար: ՀՀ նախագահ ընտրելու համար նոր Սահմանադրությամբ անհրաժեշտ են պարզամավորների 3/4-ի կողմ ձայները, իսկ Սահմանադրական դատարանի նախագահ և անդամներ, Բարձրագույն դատական խորհրդի 5 անդամներ, գլխավոր դատախազ, Մարդու իրավունքների պաշտպան, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի, Հաշվեքննիչ պալատի, Կենտրոնական բանկի նախագահներ և անդամներ նշանակելու, ինքնավար մարմիններ ձևավորելու համար անհրաժեշտ է պարզամավորների 3/5-ի համաձայնությունը: Այս հարաբերակցությունն է պահանջվում նաև սահմանդրական օրենքների ընդունման համար:

¹ Աժ կանոնակարգի 7-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Ազգային ժողովի ընտրության արդյունքով մանդատների ընդհանուր թվի ոչ պակաս, քան 54 %-ը ստացած կուսակցության (կուսակցությունների դաշինքի) կամ քաղաքական կոալիցիայի անդամ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ստեղծած խմբակցությունները համարվում են կառավարող, իսկ մյուս խմբակցությունները՝ ընդդիմադիր:

6-րդ գումարման Ազգային ժողովի քաղաքական հարաբերակացությունը և ՀՀ-ՀՅԴ կոալիցիոն համագործակցությունը խորհրդարանական մեծամասնությանը թույլ են տալիս հեշտությամբ ապահովել պահանջվող 3/5-ը (անհրաժեշտ է 63 ձայն, մինչդեռ ՀՀ-ՀՅԴ կոալիցիան ունի 65-ը): Բացառություն է ՀՀ նախագահի ընտրությունը, որի քվեարկության ժամանակ անհրաժեշտ է 79 ձայն, ինչը կոալիցիային պարտադրում է բանակցել ընդդիմադիր խմբակցությունների հետ:

Աժ կանոնակարգը սահմանում է նաև դրույթներ, որոնք թեև վերաբերում են Աժ բոլոր սուբյեկտներին, բայց անուղղակիորեն լրացուցիչ հնարավորություն են ընդդիմության համար: Մասնավորապես, սահմանվում է, որ պարզամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդի պահանջով, Ազգային ժողովի իրավասության մեջ մտնող եւ հանրային հեղափոխություն ներկայացնող հարցերին վերաբերող փաստերը (բացառությամբ պաշտպանության և անվտանգության բնագավառների) պարզելու և դրանք Ազգային ժողով ներկայացնելու նպատակով կարող է ստեղծվել քննիչ հանձնաժողով: Գործող խորհրդարանում քաղաքական ուժերի հարաբերակցությունն ընդդիմադիր խմբակցություններին թույլ է տալիս ոչ միայն քննիչ հանձնաժողով ստեղծել, այլև նախագահել այն: Օրենքի ուժով դրա ստեղծման իմպերատիվ պահանջն Աժ քաղաքական մեծամասնությանը գրկում է նախաձեռնությանը խոչընդոտելու հնարավորությունից: Այս ինստիտուտը, սակայն, դեռ չի գործարկվել, քանի որ Սահմանադրության՝ քննիչ հանձնաժողովի ստեղծում սահմանող 108-րդ հոդվածն ուժի մեջ է մտնելու 2018թ. ապրիլից:

Նույնը վերաբերում է ընդդիմության համար առանցքային ևս մեկ քաղաքական գործիքի՝ Աժ խմբակցության կողմից կառավարությանն ուղղված հարցապնդման պատասխանի հիման վրա վարչապետին անվստահություն հայտնելու հարց հարույցելուն: Քաղաքական փոքրամասնության այս իրավունքն ամրագրված է փոփոխված Սահմանադրության 113-րդ և 115-րդ հոդվածներում, համաձայն որոնց՝ հարցապնդման քննարկման արդյունքով խմբակցությունը կարող է քննարկման առարկա դարձնել կառավարության առանձին անդամների հեղափոխ պաշտոնավարման կամ վարչապետին անվստահություն հայտնելու հարցը:

Գործում են նաև նախորդ գումարումից այս խորհրդարանին փոխանցված և ընդդիմադիր խմբակցությունների շահերից բխող ընթացակարգային մի քանի այլ կառուցակարգեր ևս: Դրանցից մեկն օրենքի կամ որոշման նախագիծն արտահերթ կարգով քառօրյա նիստերի օրակարգ ընդգրկելու, անգամ գլխադասային հանձնաժողովի բացասական եզրակացությամբ դրա քննարկումը պնդելու հնարավորությունն է:

«Ելք» խմբակցության նախաձեռնություններից 1-ը քննարկվել և մերժվել է, 3-ը քվեարկությամբ օրակարգ չի ընդգրկվել, մյուսները նստաշրջանի օրակարգում են քննարկման անորոշ հեռանկարով: «Ծառուկյան» խմբակցության 15 նախագծերից ընդունվել է 2-ը, 2-ի ընդգրկումը օրակարգ մերժվել է: Խմբակցության 2 նախագիծ նստաշրջանի օրակարգում է, 9-ը՝ շրջանառության մեջ:

Ի փարբերություն «Ծառուկյան» խմբակցության «Ելք»-ը փորձել է ամբողջությամբ կիրառել օրենքով ընդդիմությանը տրված գործիքակազմը: 9 հոգանոց խմբակցությունն օգտվել է կառավարությանը հարցապնդում ներկայացնելու, արտահերթ կարգով որոշման նախագիծ (ԵԱՏՄ–ին Հայաստանի անդամակցությունը դադարեցնելու հարցի շուրջ ԱԺ ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու մասին) քննարկման առարկա դարձնելու իրավունքից, նույն հարցի վերաբերյալ ԱԺ հայտարարություն ընդունելու նախաձեռնությունը դարձրել է ԱԺ լսումների առարկա և այլն: Խմբակցությանը հաջողվել է փակակամ ընթացք թեման պահել հանրային-քաղաքական օրակարգում:

«Ելք»-ը փարբերվել է նաև նախագծերի քննարկման ժամանակ հարցերի և ելույթների քանակով: Խմբակցության 9 պարզամավորները միասին առաջին 2 նստաշրջանի ընթացքում հնչեցրել են 300-ից ավելի հարց ու ելույթ: Այսինքն «Ելք»-ի պարզամավորներից յուրաքանչյուրը միջինացված ցուցանիշով հանդես է եկել շուրջ 30 հարց ու ելույթով: «Ծառուկյան» խմբակցության նույն ցուցանիշը 10 է, ՀՀԿ-ական պարզամավորներինը՝ 5, ՀՅԴ-ինը՝ 1: Ընդ որում «Ելք»-ի ցուցանիշը կազմվել է ողջ խմբակցության գործունեության արդյունքում ի փարբերություն մյուսների, որոնց ակտիվ հատվածը փաստացի գործել է նաև պասիվների կամ «լուռ» պարզամավորների փոխարեն:

Խորհրդարանական փոքրամասնության արդյունավետության վրա ազդել է նաև փոխադարձ անվստահության մթնոլորտը: Առաջին 2 նստաշրջանի ընթացքում ընդդիմադիր խմբակցությունների միջև չի ձևավորվել անգամ իրավիճակային համագործակցություն: Օրինակներից մեկը «Ծառուկյան» խմբակցությանն ուղղված «Ելք»-ի առաջարկն էր՝ 3-րդ նստաշրջանում ՀՀ նախագահի ընտրություններում միասնական թեկնածուով հանդես գալու վերաբերյալ: «Ծառուկյան» խմբակցությունը մերժել է առաջարկը:



ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՓԱՍՏԱՑԻ ԴՈՒՐՄԱՂՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՑ

6-րդ գումարման ԱԺ-ում պարզամավորական էթիկային վերաբերող հարցերը քննարկման առարկա չեն դարձել, թեպետ առաջին 2 նստաշրջանի ընթացքում վարույթ հարուցելու փորձ փոխ դեպքեր և իրավիճակներ խորհրդարանում եղել են: Հիմնական պարճառը ԱԺ կանոնակարգ-օրենքով սահմանված նոր իրավակարգավորումներն են, որոնք զգալիորեն բարդացրել են էթիկական խախտումները քննության առարկա դարձնելու և կարգազանց պարզամավորների վարքագծի վրա ներազդելու գործընթացը:

ԱԺ նոր կանոնակարգով հանվել է յուրաքանչյուր նստաշրջանի համար առանձին էթիկայի հանձնաժողով ձևավորելու պարտադիր պահանջը, ինչը փաստացի ապահովում էր էթիկայի հանձնաժողովի շարունակական գործունեությունը: Ըստ նոր կանոնակարգի՝ էթիկայի հանձնաժողով կարող է ստեղծվել էթիկայի խախտման յուրաքանչյուր դեպքի համար, երկամսյա ժամկետով (ԱԺ որոշմամբ ևս մեկ ամիս ավելացնելու հնարավորությամբ): Այն ձևավորվում է ԱԺ ժամանակավոր հանձնաժողովի չափորոշիչներին համապատասխան սկսած գործունեության կարգից մինչև ԱԺ-ին համապատասխան եզրակացություն ներկայացնելը:

Փոփոխության արդյունքում էթիկայի նորմերի խախտման հարցի հարուցումը ինստիտուցիոնալ մակարդակից տեղափոխվել է քաղաքական և զուտ իրավիճակային արձագանքման հարթություն:

Եթե նախկինում խախտման դեպքի կապակցությամբ դիմում էին ուղիղ էթիկայի հանձնաժողովին, ապա հիմա խորհրդարանն է որոշելու՝ արժե՞ ներկայացված հարցով էթիկայի ժամանակավոր հանձնաժողով ստեղծել, թե՞ ոչ:

Ըստ էության՝ ԱԺ մեծամասնությանն է վերապահվում էթիկայի արձանագրված խախտումները ժամանակավոր հանձնաժողովի մակարդակով քննարկման առարկա դարձնելու կամ չդարձնելու իրավասությունը: Ընդ որում՝ նախորդ գումարման խորհրդարանում էթիկայի հանձնաժողովները հարյուր վարույթ ընդունելիս առաջնորդվում էին կոնկրետ չափորոշիչներով: ԱԺ նախկին կանոնակարգ-օրենքը հստակ սահմանում էր, թե որ դեպքերում է հանձնաժողովն իրավասու մերժել ներկայացված դիմումը: Մինչդեռ գործող իրավակարգավորումներով չափորոշիչներ չեն սահմանվում, ինչն ընդլայնում է հայեցողականության շրջանակը:

Սահմանված իրավակարգավորումները 2-րդ նստաշրջանի ընթացքում փաստացի գործարկվել են միայն մեկ անգամ Արտաշես Գեղամյան-Նիկոլ Փաշինյան միջադեպի առիթով:

6-րդ գումարման Ազգային ժողովի 2-րդ նստաշրջանում էթիկայի հանձնաժողով ստեղծվելու առաջարկ ներկայացրել է միայն «Ելք» խմբակցությունը: Առաջարկվում էր քննել ՀՀԿ խմբակցության անդամ Արտաշես Գեղամյանի և «Ելք» խմբակցության ղեկավար Նիկոլ Փաշինյանի միջև հոկտեմբերի 5-ին տեղի ունեցած միջադեպը: Փաշինյանը պնդում էր, որ ԱԺ միջանցքում Գեղամյանը բռունցքով հարվածել է իրեն: Հոկտեմբերի 18-ին ԱԺ պետաիրավական և մարդու իրավունքների պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովը քննարկեց Գեղամյանի ու Փաշինյանի միջև տեղի ունեցած միջադեպով էթիկայի հանձնաժողով ստեղծելու «Ելքի» առաջարկը: Հարցի քննարկումը հետաձգվեց՝ նախագիծը լրամշակելու նպատակով:

Արտաշես Գեղամյանի և Նիկոլ Փաշինյանի միջև տարաձայնությունները ծագել էին նիստերի դահլիճում հայ-ռուսական ռազմատեխնիկական համագործակցությանն առնչվող հարցի քննարկման ժամանակ:

Նոր կանոնակարգումներով էականորեն սահմանափակվել է էթիկայի խախտման հարցերով քննարկում հարույցելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը: Այդպիսի իրավունք ունեն միայն խմբակցությունները: ԱԺ կանոնակարգ օրենքի 16-րդ հոդվածը սահմանում է. «Ժամանակավոր հանձնաժողովն ստեղծվում է Ազգային ժողովի որոշմամբ, որի նախագիծը ներկայացնելու իրավունքն ունի խմբակցությունը»: Նախկինում էթիկայի խախտման հարցերով քննարկում նախաձեռնելու իրավունք ունեին նաև հասարակական կազմակերպություններն ու քաղաքացիները: Այժմ նման ցանկության դեպքում նրանք պետք է դիմեն խմբակցություններին:

Փաստացի, խորհրդարանական կառավարման համակարգի պայմաններում վերացվել են քաղաքացիների, քաղաքացիական հասարակության կողմից պարզամավորների բարոյաէթիկական վարքագծի վրա ազդելու, այն վերահսկելու լծակները: 6-րդ գումարման ԱԺ-ում նման հարցով որևէ անձ կամ կառույց պարզամավորներին կամ խմբակցություններին չի դիմել, մինչդեռ նախորդ գումարման ԱԺ-ում էթիկայի հանձնաժողովի ստացած դիմումների ճնշող մեծամասնությունը անհատներից և հասարակական կազմակերպություններից էր:

Ժամանակավոր հանձնաժողովի կարգավիճակը, դիմելու իրավունք ունեցողների շրջանակի սահմանափակումը, հանձնաժողովի ստեղծման հարցում քաղաքական մեծամասնության դերակատարման ավելացումը փաստացի նվազեցրել են խորհրդարանում էթիկայի հանձնաժողով ստեղծելու հնարավորությունը:

5-րդ գումարման ընթացքում գործած էթիկայի հանձնաժողովներն ունեին ֆորմալ բնույթ և սահմանափակ ազդեցություն: Էթիկական նորմերի պահպանման մշակույթն ու պարասխանաբարձության գիտակցումն ամրապնդելու փոխարեն ընտրվել է ինստիտուտի կարևորությունը նվազեցնելու, դերակատարումը փոքրացնելու ուղին:

Փաստապի առկա են էթիկայի հանձնաժողովի ինստիտուտն անկենսունակ դարձնելու բոլոր նախադրյալները: Դրանցից մեկն էլ վերաբերում է հանձնաժողովի եզրակացությունների հրապարակմանը: Աժ կանոնակարգ օրենքի 17-րդ հոդվածը սահմանում է, որ պարզամավորական էթիկային առնչվող հարցի վերաբերյալ ժամանակավոր հանձնաժողովի եզրակացությունն Աժ նիստում չի քննարկվում եւ տեղադրվում է խորհրդարանի պաշտոնական կայքէջում: Նախկին կանոնակարգում առկա էր եզրակացության հրապարակման մեխանիզմ. եզրակացությունը ներկայացվում էր ամբիոնից կամ բաժանվում էր պարզամավորներին:

Շահերի բախումը նոր իրավակարգավորումներում

Աժ նոր կանոնակարգով շահերի բախման ամբողջ բաղադրիչն Աժ-ից փոխանցվել է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին, որին վերապահվել է պարզամավորների գործունեության ընթացքում շահերի բախման, ինչպես նաև անհամարելիության հետ կապված խախտումների բացահայտումը: Այն դեպքում, երբ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովն Ազգային ժողով է ներկայացնում պարզամավորի կողմից պարզամավորական մանդատի անհամարելիության պահանջները խախտելու վերաբերյալ եզրակացություն, ոչ միայն Աժ խորհուրդը, այլև նույնիսկ պարզամավորների 1/5-ը կարող են տվյալ պարզամավորի լիազորությունները դադարեցնելու հարցով դիմել Սահմանադրական դատարան:

6-րդ գումարման Աժ առաջին 2 նստաշրջանի ընթացքում նման դեպքեր չեն արձանագրվել:



ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐ. ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 6-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

Ազգային ժողովի 6-րդ գումարման առաջին 2 նստաշրջանի ընթացքում 9 մշտական հանձնաժողովի նախաձեռնությամբ անցկացվել են 8 խորհրդարանական լսումներ:

Լսումներ են կազմակերպել 9 հանձնաժողովից 5-ը: Առողջապահության և սոցիալական, պետաիրավական, տնտեսական, ֆինանսավարկային և բյուջեբային հարցերի հանձնաժողովները 2 նստաշրջանի ընթացքում լսումներ չեն կազմակերպել:

Պաշտպանության և անվտանգության հարցերի, արտաքին հարաբերությունների, եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովները կազմակերպել են 2-ական, գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովները՝ 1-ական լսում:

Արտաքին հարաբերությունների և եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովները համարել հրավիրել են լսումներ «Հայաստան-Եվրամիություն. համապարփակ և խորացված գործընկերություն» թեմայով:

Աժ խմբակցություններից խորհրդարանական լսումներ է հրավիրել միայն «Ելք» խմբակցությունը՝ «ՀՀ մասով Եվրասիական տնտեսական միության պայմանագրի գործողությունը դադարեցնելու գործընթաց սկսելու վերաբերյալ» թեմայով:

խորհրդարանական լսումը որոշումների կայացման գործընթացում հանրության մասնակցությունն ու ազդեցությունը ապահովող հիմնական գործիքն է: 6-րդ գումարման Ազգային ժողովում լսումների կազմակերպման ընթացակարգը ենթարկվել է որոշակի փոփոխությունների:

- ▶ Աժ նախորդ կանոնակարգ օրենքով լսումներ հրավիրելու իրավասություն ունեին Աժ նախագահը և մշտական հանձնաժողովները: Համաձայն նոր օրենքի՝ խորհրդարանական լսումներ հրավիրելու իրավասություն ունեն նաև խմբակցությունները:
- ▶ Աժ նոր կանոնակարգով սահմանվել են լսումների իրազեկմանը, կազմակերպմանը, արդյունքների ամփոփմանը վերաբերող ընթացակարգեր, որոնք ընդհանուր են լսումների անցկացման իրավասությամբ օժտված բոլոր սուբյեկտների համար: Մինչդեռ նախկինում այդ հարաբերությունների մեծ մասը կարգավորվում էր հանձնաժողովների ներքին կանոնակարգերով:
- ▶ Նախորդ կանոնակարգ օրենքով լսումների թեմայի որոշման հարցում գործում էր միայն մեկ սահմանափակում. հանձնաժողովը կարող էր լսում հրավիրել բացառապես իրեն վերապահված ոլորտներին վերաբերող հարցերով: Այս դրույթը նոր կանոնակարգում պահպանվել է, ավելացել է ևս մեկ սահմանափակում. խմբակցությունները լսումներ կարող են կազմակերպել միայն խմբակցության կամ դրանում ընդգրկված պարզամավորի հեղինակած նախագծի վերաբերյալ:
- ▶ Լսումների անցկացումը ոչ թե պարտավորություն է, ինչպես նախորդ գումարման Աժ-ում, այլ՝ հայեցողություն. հանվել է յուրաքանչյուր նստաշրջանում առնվազն մեկ լսում կազմակերպելու պահանջը: Սա, մի կողմից, վերացնում է ինքնանպատակ, օրենքի պահանջը ձևականորեն կատարելու հրամայականը, մյուս կողմից՝ թույլ է տալիս լսումներ չհրավիրել՝ առանց օրենքը խախտելու:
- ▶ Կանոնակարգով սահմանափակվում է լսումներ հրավիրելու խմբակցությունների հնարավորությունը. մեկ նստաշրջանի ընթացքում խմբակցությունը 1-ից ավելի լսում հրավիրել չի կարող: Սա քաղաքական փոքրամասնությանը զրկում է քաղաքական օրակարգ ձևավորելու, հասունացնելու և պարտադրելու մեխանիզմից՝ մեծամասնությանը տալով լսումների կազմակերպումը վերահսկելու լիարժեք հնարավորություն:

Լսումների արդյունավետության ցուցիչները

Աժ 6-րդ գումարման 2 նստաշրջանի ընթացքում լսումների անցկացման պրակտիկան որակապես չի փոքրվել նախորդ գումարման Աժ-ում ձևավորված ավանդույթից. ինստիտուտը շարունակել է գործել ցածր արդյունավետությամբ՝ ունենալով ֆորմալ նշանակություն:

Լսումներ կազմակերպելու իրավունքից նստաշրջանի ընթացքում խորհրդարանական 4 խմբակցություններից օգտվել է միայն «Ելքը»: Այն հրավիրվել է «Հայաստանի մասով Եվրասիական տնտեսական միության պայմանագրի գործողությունը դադարեցնելու գործընթաց սկսելու վերաբերյալ» թեմայով: Որպես հիմք ծառայել է խմբակցության Աժ-ում նույնաբովանդակ որոշման նախագիծ հեղինակելու իրողությունը: Աժ քաղաքական մեծամասնությունը ամենամեծ ընդդիմադիր «Ծառուկյան» խմբակցությունը չեն օգտագործել լսումների անցկացման և դրա միջոցով օրենսդրական ակտուալ խնդիրները հանրային քննարկման առարկա դարձնելու իրավունքը:

Լսումներ հրավիրելու հարցում չի մեծացել նաև մշտական հանձնաժողովների նախաձեռնողականությունը: Աժ 9 մշտական հանձնաժողովից միայն 5-ն է լսումներ կազմակերպել, մեծ մասը՝ միայն 1 անգամ: Սա գրեթե նույնությամբ կրկնում է նախորդ գումարման խորհրդարանի պատկերը:

Հարկանշական է, որ պասիվություն են ցուցաբերել ԱԺ, այսպես կոչված, հենակետային հանձնաժողովները, որոնք ամենաշար նախագծերն են քննարկում և ավելի մեծ ազդեցություն ունեն օրինաստեղծ քաղաքականության վրա: Խոսքը մասնավորապես, պետաիրավական, տնտեսական, ֆինանսավարկային և սոցիալական հարցերով զբաղվող հանձնաժողովների մասին է: Հենց այս հանձնաժողովներում է քննարկվել սահմանադրական օրենքների նախագծերի մեծ մասը: Փաստացի, ԱԺ-ն չի օգտագործել այդ առանցքային նախագծերի շուրջ հանրային դիսկուրս ապահովելու և մասնագիտական շրջանակների ներգրավմամբ օրենքների հանրային լեգիտիմության մակարդակը բարձրացնելու լծակը:

Շարունակում է խնդրահարույց մնալ լսումների թեմաների արդիականությունը: Հրավիրված լսումներից միայն 4-ն են փաստացի բխել տվյալ ժամանակահատվածում հանրային հեղափոխության, ընթացող հասարակական-քաղաքական գործընթացների վրա ազդեցության գործոններից: Դրանցից են եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի հրավիրած 2 լսումները՝ «Ընդհանրական բռնության կանխարգելման և ընդհանրական բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» և արտաքին հարաբերությունների հանձնաժողովի հետ համատեղ՝ «Հայաստան-Եվրամիություն համապարփակ և խորացված գործընկերության» մասին լսումները, պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի կազմակերպած 2 լսումներից հարկապես մեկը՝ «Զինապարտության եւ զինվորական ծառայության մասին օրենսդրական նոր կարգավորումների վերաբերյալ», «Ելք» խմբակցության հրավիրած «ՀՀ մասով Եվրասիական տնտեսական միության պայմանագրի գործողությունը դադարեցնելու գործընթաց սկսելու վերաբերյալ» թեմայով լսումները:

Հրավիրված մյուս լսումների թեմաները ոլորտային նշանակություն են ունեցել՝ հեղափոխելով և մասնակցության շահագրգռելով առավելապես մասնագիտական շրջանակներին: Օրինակ, պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովը լսումներ է հրավիրել «Աղետների ռիսկերի կառավարման բնագավառում ազգային կարողությունների զարգացումը», տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովը՝ «ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների առկա վիճակը, հիմնախնդիրները և լուծման ուղղությունները» թեմաներով:

Շարունակում է խնդրահարույց մնալ լսումների ազդեցության հարցը: Չկան չափորոշիչներ գնահատելու, թե լսումների ընթացքում հնչող հանրային, քաղաքական և մասնագիտական դիրքորոշումներն ու առաջարկներն որքանով են հաշվի առնվում նախագծերի մշակման գործընթացում:

Չի կիրառվում լսումների արդյունքում հանձնաժողովի որոշմամբ արձանագրություն կազմելու եւ Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրելու իրավանորմը: Չկա որպես այդպիսին լսումների արդյունքների վերաբերյալ արձանագրության միասնական ձև, և հանձնաժողովները յուրովի են մոտենում դրանք կազմելու գործընթացին: Այսուհանդերձ, ԱԺ 6-րդ գումարման 2 նստաշրջանում հրավիրված լսումները նախորդներից տարբերվել են հրապարակայնության առավել բարձր մակարդակով: Լսումների համացանցային հեռարձակումապահովելու պահանջի կատարումը թույլ է տալիս հանրությանը անմիջականորեն հետևել ծավալվող քննարկումներին և բարձրացնել տեղեկացվածության մակարդակը:



ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ

Սահմանադրական և օրենսդրական նոր լծակները

Սահմանադրական փոփոխություններով ամրագրված խորհրդարանական կառավարման համակարգն իրավական առումով զգալիորեն ուժեղացրել է ԱԺ վերահսկողական գործառույթը՝ այն տեղափոխելով որակական նոր հարթություն:

Գործադիր իշխանության նկատմամբ խորհրդարանի վերահսկողությունը. հիմնական օրենքն ընդգծում է պետական կառավարման համակարգում Ազգային ժողովի գերակա կարգավիճակը և պարտադրում օրենսդրական ու ենթօրենսդրական մակարդակներում ապահովել իրազման կոնկրետ կառուցակարգեր: ԱԺ կանոնակարգօրենքով ամրագրված վերահսկողական նոր լծակները, սակայն, խորհրդարանը հիմնականում կարող է կիրառել ՀՀ 4-րդ նախագահի լիազորություններն ստանձնելուց հետո:

Կառավարության հաշվետվողականությունը. խորհրդարանը ստացել է կառավարության ծրագրի կատարման ընթացքի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու հնարավորություն: Յուրաքանչյուր տարվա սկզբում կառավարությունը պարտավոր է խորհրդարանին զեկույցել իր ծրագրի՝ նախորդ տարվա ընթացքում կատարման վիճակի և արդյունքների վերաբերյալ: Թեև ԱԺ-ն չունի քննարկման արդյունքում որևէ փաստաթուղթ ընդունելու լիազորություն, սակայն այս մեխանիզմը հնարավորություն է տալիս կառավարության հիմնարար ծրագիրը պահել ուշադրության կենտրոնում և գնահատել նրա գործունեությունը:

Հանրային հեղափոխություն ներկայացնող հարցեր. խորհրդարանին վերապահվել է քննիչ հանձնաժողովստեղծելու իրավասություն: Զուգահեռաբար պահպանվելու են մինչ այդ գործող բոլոր մեխանիզմները: Օժտված լինելով ավելի լայն հնարավորություններով ու լծակներով, նոր հանձնաժողովը կարող է դառնալ ԱԺ ինստիտուցիոնալ ամենալուրջ գործիքներից մեկը:

Օրենքների կատարման ընթացքի նկատմամբ վերահսկողություն. այս իրավասության շրջանակներում ԱԺ մշտական հանձնաժողովները կարող են սեփական հայեցողությամբ ընտրել խորհրդարանական վերահսկողության թեման, իրականացման միջոցառումները: Մշտական հանձնաժողովը վերահսկողության արդյունքներով կարող է եզրակացություն ընդունել, ինչը կատարված աշխատանքի արդյունքների հանրայնացման և մասնագիտական, քաղաքական գնահատականի արժանացնելու կոնկրետ մեխանիզմ է:

Խմբակցությունների դերը ԱԺ վերահսկողական գործառույթում. հարցապնդման մեխանիզմով խմբակցություններն ունեն ոչ միայն կառավարության պատասխանը ԱԺ լիազումար նիստերի քննարկման առարկա դարձնելու, այլև դրանց հիման վրա կառավարության առանձին անդամների պաշտոնավարման նպատակահարմարության կամ վարչապետին անվստահություն հայտնելու գործընթաց սկսելու իրավասություն:

Հարցապնդման պատասխանի հիման վրա կառավարությանն անվստահություն հայտնելու, կառավարության անդամների պաշտոնավարման խնդիրը բարձրացնելու մասին դրույթները կիրառելի կդառնան ՀՀ նոր նախագահի՝ իր լիազորություններին անցնելու պահից: Սակայն հարցապնդմամբ հանդես գալու և դրա քննարկում պահանջելու խմբակցության իրավունքը գործում է 6-րդ գումարման ԱԺ մեկնարկից: Այդ իրավունքից օգտվել է միայն «Ելք» խմբակցությունը՝ կառավարությունից պահանջելով պատասխանել Երևանի «Զվարթնոց», Գյումրու «Շիրակ», ինչպես նաև Թբիլիսիի «Շոթա Ռուսթավելի» միջազգային օդանավակայաններին վերաբերող հարցապնդմանը և նախաձեռնելով խորհրդարանական քննարկում դրա շուրջ:

Բացի պարզամավորներից՝ խորհրդարանական վերահսկողության սուբյեկտ է դարձել նախ խմբակցությունը, իսկ հանձնաժողովները փաստացի դարձել են ԱԺ վերահսկողական գործառույթի առանցքային պարասխանափուլ օղակներ: Կարելի է ասել՝ այս գործառույթի որակի և արդյունավետության ապահովումը նոր իրավակարգավորումների պայմաններում դրված է ոչ այնքան ԱԺ լիազորմար նիստերի, որքան հենց խորհրդարանական մշտական և ժամանակավոր հանձնաժողովների վրա:

6-րդ գումարման Ազգային ժողովն առաջին 2 նստաշրջանի ընթացքում գործել է առանց վերոնշյալ նոր լիազորությունների իրականացման:

Պետական մարմինների հաղորդումների, զեկույցների, հաշվետվությունների քննարկումը

Խորհրդարանի վերահսկողական ամենալուրջ լծակներից մեկը գործադիր մարմնի, ինչպես նաև պետական այլ հաստատությունների ամենամյա հաշվետվությունները, հաղորդումները, զեկույցները քննարկման առարկա դարձնելն է: Ֆորմալ առումով այս գործառույթն իրացվել է ԱԺ նոր կանոնակարգի պայմաններում: Թեև ընդհանուր առմամբ պահպանվել են մոտեցումները, նկատելի են եղել նոր տարրեր, որոնք հարկ է դիտարկել այս փաստաթղթերի փաստացի քննարկումների էմպիրիկ վերլուծության համատեքստում:

6-րդ գումարման ԱԺ-ն 2017թ. ընթացքում քննարկել է ՀՀ 2016թ. պետական բյուջեի կախարման մասին փարեկան հաշվետվությունը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործունեության մասին հաղորդումը, «2016թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության վիճակի մասին» փարեկան հաղորդումը, ՀՀ դատախազության 2016թ. գործունեության մասին հաղորդումը,

Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի 2016թ. գործունեության մասին հաղորդումը, ՀՀ վերահսկիչ պալատի 2016թ. փարեկան հաշվետվությունը, ՀՀ վերահսկիչ պալատի 2018թ. գործունեության փարեկան ծրագիրը, ՀՀ կենտրոնական բանկի 2016թ. դրամավարկային քաղաքականության ծրագրի կախարման հաշվետվությունը (գնաճի հաշվետվություն), ՀՀ կենտրոնական բանկի 2017թ. դրամավարկային քաղաքականության ծրագիրը:

Այս փաստաթղթերի խորհրդարանական քննարկումների դիտարկումը թույլ է տալիս նշել օրինաչափություններ և միտումներ

- ▶ Բոլոր փաստաթղթերը քննարկվել են առաջին նստաշրջանից հետո հատուկ այդ նպատակով հրավիրված ԱԺ արտահերթ նստաշրջանի ընթացքում: ԱԺ նոր կանոնակարգում առավել կոնկրետացված և միասնականացված են դրանք ԱԺ ներկայացնելու ժամկետները, սակայն, ինչպես նախկինում, քննարկումն ապահովվելու ժամկետային ընթացակարգերը մնում են խիստ անորոշ: Դա ԱԺ խորհրդին հնարավորություն է տալիս քննարկումներն ապահովել ոչ միայն արտահերթ, այլև հաջորդ նստաշրջանում կամ նույնիսկ ավելի ուշ: Ինչպես ցույց է տվել նախորդ գումարման ԱԺ պրակտիկան, այդ հնարավորությունը որպես կանոն շահագործվում է խորհրդարանական քննարկումները ողջամիտ փրամաբանությունից դուրս ժամկետներում քննարկելու, դրանով իսկ այդ փաստաթղթերի հանրային և քաղաքական, գործնական նշանակությունը չեզոքացնելու համար: Նոր գումարման ԱԺ-ում այս պրակտիկան գործել է նաև Վերահսկիչ պալատի 2016թ. աշխատանքների արդյունքների հաշվետվության պարագայում, երբ խախտվել են թե ներկայացման, թե քննարկման համար սահմանված ժամկետները:

Վերոնշյալ դեպքերի համար կա մեղմացուցիչ հանգամանք նոր խորհրդարանը նախորդից որպես ժառանգություն էր ստացել ուշապաժ քննարկումների բեռը, որից ազատվեց չսպասելով աշնանային նստաշրջանին:

- ▶ Խորհրդարանը շարունակել է միևնույն պետական գերատեսչությանը վերաբերող փաստաթղթերի միաժամանակ քննարկման պրակտիկան: Հուլիսին հրավիրված ԱԺ արտահերթ նիստում հաջորդաբար քննարկվել են նախ՝ ՀՀ վերահսկիչ պալատի 2016 թվականի տարեկան հաշվետվությունը և 2018 թվականի գործունեության տարեկան ծրագիրը հաստատելու մասին որոշումը, ապա՝ ՀՀ կենտրոնական բանկի 2016 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվությունը և 2017 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագիրը: Եթե ՎՊ գործունեության տարեկան ծրագրի քննարկումն ինչ-որ չափով հասկանալի է, ապա ԿԲ 2017 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրի քննարկումը հաշվետու ժամանակահատվածի կեսին, երբ դրանով նախատեսված միջոցառումները կես տարի եղել են գործողության մեջ, մեղմ ասած, ժամանակավրեպ էր:

Հարկ է նշել, որ 2015թ. ընդունված Սահմանադրությամբ ինչպես Հաշվեքննիչ պալատը (նախկին Վերահսկիչ պալատ), այնպես էլ Կենտրոնական բանկը իրենք են ընդունում և հաստատում իրենց գործունեության ծրագրերը և այդ փաստաթղթերը խորհրդարանին ներկայացնելու պարտավորություն այլևս չունեն:

- ▶ Արագացվել է վերահսկողական բնույթի փաստաթղթերի քննարկման ընթացակարգը: ԱԺ-ն այլևս կաշկանդված չէ նմանադիպ փաստաթղթերի քննարկման համար 60 կամ 90 րոպեանոց ռեժիմներ սահմանելու հարցում: Թերևս նաև դա է պատճառը, որ վերոնշյալ բոլոր փաստաթղթերը խորհրդարանը լսել և քննարկել է ընդամենը 3 աշխատանքային օրվա ընթացքում, այն դեպքում, երբ, օրինակ, միայն ՀՀ գլխավոր դատախազի հաղորդման համար 2015թ. պահանջվեց գրեթե մի ամբողջ քառօրյա:
- ▶ ԱԺ նոր կանոնակարգը չի լուծել ներկայացվող հաղորդումների, զեկույցների, հաշվետվությունների քննարկումների քաղաքական նշանակությունը բարձրացնելու, գործնական հետևանքների հանգեցնելու խնդիրը: Բացառությամբ ՀՀ պետական բյուջեի կատարման հաշվետվությունից, որն ավարտվում է քվեարկությամբ և կարող է դրվել կառավարության անվտանգության հարցը, վերահսկողական նշանակության մյուս փաստաթղթերի քննարկումը, ինչպես նախկինում, ավարտվում է դրանց շուրջ մտքերի փոխանակմամբ և զեկույցողների ամփոփիչ ելույթներով: Այս հանգամանքը նվազեցնում է քննարկումներին մասնակցության պարզամավորների մոտիվացվածությունը:

Իրավական առումով ԱԺ նոր կանոնակարգը ստեղծում է առկա իրավիճակը փոխելու բավարար նախադրյալներ. նախ՝ հաղորդումներով, զեկույցներով և հաշվետվությամբ հանդես եկող պաշտոնատար անձանց նշանակման և պաշտոնազրկման գործառույթն ամբողջությամբ անցել է խորհրդարանին: Ցանկացած պահի ԱԺ-ն կարող է հանդես գալ նրանց պաշտոնանկ անելու, լիազորությունները դադարեցնելու նախաձեռնությամբ: Տարեկան հաղորդումներն ու զեկույցները կարևոր ցուցիչ են պաշտոնատար անձանց և նրանց ղեկավարած համակարգերի գործունեության արդյունավետությունն ու որակը գնահատելու համար, ուստի դրանց քննարկումը կարող է նաև պաշտոնազրկման գործընթաց հարույցելու նախադրյալ դառնալ:

Նոր իրավակարգավորումներով որոշակիորեն բարձրացվել է նաև խորհրդարանի կողմից ուղերձներ, հայտարարություններ ընդունելու քաղաքական նշանակությունը: Դրանք ընդունվում են պարզեցված ընթացակարգերով: Վերահսկողական նշանակության փաստաթղթերի քննարկումն առավել քան իրավաչափ հիմք կարող է լինել դրանց կապակցությամբ հայտարարություն ընդունելու և այդ կերպ խորհրդարանի քաղաքական դիրքորոշումը, հավաքական գնահատականը հնչեցնելու համար:

Աժ որոշումներ, հայտարարություններ և ուղերձներ ընդունելուն վերաբերող հոդվածներն ուժի մեջ են մտել 6-րդ գումարման խորհրդարանի գործունեության մեկնարկից, սակայն առաջին 2 նստաշրջանի ընթացքում դրանք չեն կիրառվել:

Նոր ինստիտուցիոնալ կառույցների ստեղծման և պետական մարմինների ղեկավար կազմերի ընտրության/նշանակման գործառույթը

Խորհրդարանական կառավարման համակարգին անցմամբ պայմանավորված Աժ-ն օժտվել է կառավարության, ինչպես նաև սահմանադրական կարգավիճակ ունեցող մի քանի պետական կառույցների ղեկավար կազմերի ընտրության, առանձին դեպքերում պաշտոնազրկման, այսինքն՝ պետական կադրային քաղաքականության մեջ կարևոր ֆունկցիոնալ դերակատարության իրավասությամբ: Դրանք այն մարմիններն են, որոնք այս կամ այն ձևաչափով հաշվեպվություն են ներկայացնում խորհրդարանին:

Վարչապետի ընտրությունը և անվստահություն հայտնելը

Նոր սահմանադրական իրավակարգավորմամբ վարչապետի նշանակման գործառույթն ամբողջությամբ Աժ իրավասության փիրություն է: Վարչապետի թեկնածու առաջադրելու իրավունք ունեն խորհրդարանական բոլոր խմբակցությունները, սակայն ներդրված կառուցակարգով գործադիր իշխանության ղեկավարի ընտրությունը պայմանավորվում է խորհրդարանական քաղաքական մեծամասնության հայեցողությամբ և կամքով: Պարզամավորները վարչապետին ընտրում են անվանական քվեարկությամբ:

Այս ընթացակարգն ուժի մեջ կմտնի 2018թ. ապրիլից: Չնայած 6-րդ գումարման Ազգային ժողովի ձևավորումից հետո ֆորմալ առումով վարչապետի նշանակում եղել է, սակայն դա իրականացվել է ՀՀ գործող նախագահի հրամանագրով՝ 2005թ. Սահմանադրության իրավակարգավորումների համաձայն:

Սահմանադրական և Աժ կանոնակարգային իրավակարգավորումներով վարչապետին անվստահություն հայտնելու քաղաքական իրավունքը խորհրդարանական մեծամասնությանն է, սակայն փոքրամասնությունն ունի նման հարց հարույցելու, անվստահության գործընթաց նախաձեռնելու իրավունք: Աժ քաղաքական ուժերի գործող հարաբերակցության պայմաններում դրա համար անհրաժեշտ է երկու ընդդիմադիր խմբակցությունների համագործակցությունը: Սակայն այն հանգամանքը, որ գործող վարչապետին անվստահություն հայտնելու գործընթացը չի կարող հարույցվել առանց վարչապետի սեփական թեկնածուն առաջադրելու, զգալիորեն բարդացնում է նման համագործակցության հեռանկարը:

Սահմանադրական դատարանի դատավորների ընտրությունը

Սահմանադրությամբ ամբողջությամբ Աժ-ին է վերապահվել ՀՀ սահմանադրական դատարանի բոլոր 9 անդամներին ընտրելու իրավասությունը, որը ևս ուժի մեջ կմտնի ՀՀ նոր նախագահի՝ իր լիազորություններին անցնելու պահից: Խորհրդարանը ՍԴ 3-ական անդամների ընտրում է Հանրապետության նախագահի, կառավարության, դատավորների ընդհանուր ժողովի առաջարկություններով: Աժ-ն գործնականում զրկվել է նրանց պաշտոնանկ անելու ուղղակի իրավունքից և կարող է միայն համապատասխան որոշում ընդունելուց հետո այդ հարցով դիմել Սահմանադրական դատարան, որն էլ կայացնում է վերջնական որոշումը:

2005թ. Սահմանադրությամբ Աժ-ն ուներ ՍԴ 10 անդամներից 5-ին նշանակելու, ինչպես նաև այդ անդամների լիազորությունները ՍԴ եզրակացության հիման վրա պարզամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ դադարեցնելու իրավասություն: Անցած 2 նստաշրջանի ընթացքում իր այս՝ այլևս ժամանակավոր իրավասությունից օգտվելու առիթ խորհրդարանը չի ունեցել:

Մասնակցությունը բարձրագույն դպրական խորհրդի կազմավորմանը

Սահմանադրական նոր ինստիտուտի կազմավորման գործընթացում ԱԺ-ն ստանձնում է ուղղակի մասնակցություն խորհրդի անդամների կեսի ընտրությամբ: ԱԺ այս իրավասությունը պայմանավորված է դպրական իշխանության բարձրագույն մարմնի անկախության մակարդակի բարձրացման և այս մարմնի կազմավորմանը միջնորդավորված հանրային-քաղաքական մասնակցության ապահովմամբ: Սակայն այս մարմինը որևէ ձևով խորհրդարանին հաշվեպետ չէ, և ԱԺ-ն չունի իր նշանակած անդամներին հետ կանչելու հնարավորություն: Այս լիազորությունը ևս ԱԺ-ն կսկսի իրացնել ՀՀ նոր նախագահի՝ իր լիազորություններն ստանձնելու պահից:

Մասնակցությունը ՀՀ վճռաբեկ դատարանի ձևավորմանը

ԱԺ-ին է վերապահված ՀՀ վճռաբեկ դատարանի դատավորների թեկնածուների և դատարանի նախագահի ընտրության իրավասությունը: Քաղաքական իմաստով էական է դատավորների թեկնածուների ընտրությունը, որը փեղի է ունենում բարձրագույն դպրական խորհրդի ներկայացրած թեկնածուներից, պարզամավորների ձայների 3/5 հարաբերակցությամբ: Վճռաբեկ դատարանի նախագահին ընտրում է արդեն ձևավորված վճռաբեկ դատարանի կազմից՝ ձայների ընդհանուր թվի մեծամասնությամբ: Վճռաբեկ դատարանի դատավորներին ընտրված թեկնածուներից նշանակում է հանրապետության նախագահը՝ ԱԺ նախագահի ներկայացմամբ: ԱԺ այս լիազորությունը կգործի ՀՀ նոր նախագահի լիազորություններն ստանձնելու պահից:

ՀՀ գլխավոր դատախազի, ՄԻՊ-ի, Հաշվեքննիչ պալատի նախագահի եւ անդամների, ԿԲ նախագահի, տեղակալների և խորհրդի անդամների, ԿԸՀ նախագահի եւ անդամների, ՀՌԱՀ անդամների ընտրությունն ու պաշտոնազրկումը

Ավելի լիարժեք է ԱԺ դերակատարությունը ՀՀ գլխավոր դատախազի, Մարդու իրավունքների պաշտպանի, Հաշվեքննիչ պալատի նախագահի և անդամների, Կենտրոնական բանկի նախագահի, տեղակալների և խորհրդի անդամների, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի և անդամների, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամների ընտրության պարագայում: Այս պաշտոնների համար թեկնածուներն առաջադրում են ԱԺ համապատասխան մշտական հանձնաժողովները: Ներդրվում է թեկնածուներին կողմնակալ առաջադրման համակարգ՝ քաղաքական փոքրամասնության ներգրավմամբ: Այս կառուցակարգը 2 անգամ կիրառել է նախորդ գումարման խորհրդարանը:

Այս պաշտոններում թեկնածուների առաջադրման, քննարկումների և ընտրության ընթացակարգերը գրեթե նույնականացվել են՝ բացառությամբ ԿԲ նախագահի տեղակալների և խորհրդի անդամների, որոնք ընտրվում են ոչ թե պարզամավորների ձայների ընդհանուր թվի 3/5-ով, այլ՝ մեծամասնությամբ: Նույն սկզբունքով ու հարաբերակցությամբ է իրականացվում նաև պաշտոնանկությունը: Հարկ է նկատել, որ նախկինում թեև ԱԺ-ն էր նախագահի ներկայացմամբ ընտրում ՀՀ գլխավոր դատախազին, ՎՊ, ԿԲ նախագահներին, Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի անդամների մի մասին, սակայն չունեի նրանց պաշտոնազրկելու, հետկանչման իրավասություն: Այս մասով ԱԺ-ն ստացել է վերահսկողական ուժեղ իրավակիրառական գործիք:

Ինքնավար մարմինների ստեղծումը և դրանց անդամների նշանակումը

Սա Սահմանադրությամբ խորհրդարանին վերապահված նոր իրավասություն է: Այս ինստիտուտը գալիս է փոխարինելու անկախ մարմինների ձևավորման ներկայումս գործող պրակտիկային: ԱԺ-ի կողմից ինքնավար մարմինների ստեղծումը հնարավոր կդառնա 2018թ. ՀՀ նորընտրի նախագահի՝ իր լիազորություններին անցնելու օրվանից:



ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ 2017Թ. ԳՈՒՅՔԻ և ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱԿԻՐՃ ԱՄՓՈՓՈՒՄ

Օրենսդրության պահանջով՝ Աժ պարզամավորները հայտարարագրեր են ներկայացնում Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով, որոնք պարունակում են նրանց գույի և եկամուտների մասին տվյալներ՝ պաշտոնը ստանձնելու դրությամբ: 6-րդ գումարման Աժ պարզամավորները պաշտոնական պարտականությունները ստանձնել են 2017թ. մայիսի 18-ին: Ամփոփվել են Աժ 105 պարզամավորներից 101-ի հայտարարագրերի տվյալները²:


Դրամական միջոցներ

2017թ. մայիսի 18-ի դրությամբ Աժ պարզամավորները միասին հայտարարագրել են՝ 7 մլրդ 431.1 մլն դրամ, 35 մլն 937.7 հազար դոլար, 10.5 մլն ռուբլի, 7 հազար շվեյցարական ֆրանկ:

Այս ամբողջը դրամային արտահայտությամբ կազմում է 29.4 մլրդ դրամ, դոլարային արտահայտությամբ՝ 60.9 մլն դոլար: Ազգային արժույթով դրամական միջոցները կազմում են ընդհանուրի մեկ քառորդը:

Շվեյցարական ֆրանկով դրամական միջոցներ հայտարարագրել է միայն Աժ նախագահ Արա Բաբլոյանը (7 հազար ֆրանկ), իսկ ՌԴ ռուբլով՝ ՀՀԿ-ական Անդրանիկ Հարությունյանը (10.5 մլն ռուբլի):

ՀՀ Աժ պարզամավորների դրամական միջոցների կառուցվածքը՝ ըստ արժույթի տեսակի³, %




² Զեկույցը կազմվելու պահին հայտարարագիր չէր լրացրել 4 պարզամավոր՝ Արտաշես Գեղամյան, Շուշան Պետրոսյան, Արման Սահակյան, Արարատ Զուրաբյան

³ Կշիռները հաշվվելու համար հիմք են հանդիսացել ՀՀ Կենտրոնական բանկի փոխարժեքները՝ 2017 թ. մայիսի 18-ի դրությամբ:

Ած 101 պատգամավորների հայտարարագրած ընդհանուր դրամական միջոցների 99.5%-ը բաժին է ընկնում «Հանրապետական» և «Ծառուկյան» խմբակցություններին:

ՀՀԿ-ի դրամական միջոցները ավելի շատ են, քան «Ծառուկյան» դաշինքին՝ 15.4 մլրդ դրամ՝ 13.9 մլրդ դրամի դիմաց: ՀՅԴ խմբակցության դրամական միջոցները 189.4 մլն դրամ է, «Ելք»-ինը՝ 35.4 մլն դրամ:

Ած պատգամավորների դրամական միջոցները՝ ըստ խմբակցությունների



Սակայն մեկ պատգամավորի հաշվարկով դրամական միջոցներով պատկերը այլ է:

«Ծառուկյան» խմբակցության՝ հայտարարագիր լրացրած 31 պատգամավորից յուրաքանչյուրին բաժին է ընկնում 449.3 մլն դրամ: Մինչդեռ ՀՀԿ 54 պատգամավորից յուրաքանչյուրը միջինն ունի 285.3 մլն դրամ: Այս առումով առաջատարը «Ծառուկյան» դաշինքն է (գծապատկերում կարմիր կորով):

ՀՅԴ խմբակցության 7 պատգամավորից յուրաքանչյուրին բաժին է ընկնում միջինը 27մլն դրամ, «Ելք» դաշինքի 9 պատգամավորից յուրաքանչյուրին՝ 3.9 մլն դրամ:

Ամենաշատ դրամական միջոցներ հայտարարագրած պատգամավորները

Ամենից շատ դրամական միջոցներ հայտարարագրած պատգամավորը, ինչպես և նախորդ գումարման խորհրդարանում, Գագիկ Ծառուկյանն է՝ 9 մլրդ 90 մլն դրամ կամ 18.8 մլն դոլար:

Երկրորդը ՀՀԿ-ական Սամվել Ալեքսանյանն է (4 մլրդ 249.8 մլն դրամ կամ 8.8 մլն դոլար), երրորդը՝ Աշոտ Արսենյանը (3 մլրդ 679.4 մլն դրամ կամ 7.6 մլն դոլար):

ՀՀԿ-ական պատգամավոր Արայիկ Գրիգորյանը 4-րդն է՝ 2 մլրդ 360 մլն դրամ կամ 4 մլն 883 հազար դոլար: Առաջին հնգյակը եզրափակում է «Ծառուկյան» խմբակցության պատգամավոր Դավիթ Մանուկյանը՝ 1 մլրդ 298 մլն դրամ կամ 2 մլն 685.4 հազար դոլար:

Ըստ հայտարարագրած դրամական միջոցների՝ Ած-ում կա 11 դոլարային միլիոնատեր: Նրանցից 6-ը ՀՀԿ-ից են, 5-ը՝ «Ծառուկյան» խմբակցությունից:

ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ	ԽՄԲ	ԸՆԴԱՄԵՆԸ/ ԴՐԱՄ	ԸՆԴԱՄԵՆԸ/ ԴՈՒՍԱՐ	ԴՐԱՄ	ԴՈՒՍԱՐ	ԵՎՐՈ
Ճառուկյան Գագիկ Կոլյայի	ԾԱՌ	9 089 570 360,0	18 807 693,8	470 890 000,0	9 745 000,0	7 273 000,0
Ալեքսանյան Սամվել Լիմինդրի	ՅՅԿ	4 249 839 000,0	8 793 558,7	335 190 000,0	8 100 000,0	
Արսենյան Աշոտ Եղիշեի	ՅՅԿ	3 679 422 190,5	7 613 280,2	200 000 000,0	7 199 450,0	
Գրիգորյան Արայիկ Թեմուրի	ՅՅԿ	2 359 958 400,0	4 883 110,3	1 896 000 000,0	960 000,0	
Մանուկյան Դավիթ Անդրանիկի	ԾԱՌ	1 297 808 000,0	2 685 360,8	25 000 000,0	2 300 000,0	300 000,0
Կարապետյան Վահան Գուրգենի	ԾԱՌ	1 269 043 700,0	2 625 843,1	340 000 000,0	1 800 000,0	110 000,0
Սարգսյան Արտակ Սամվելի	ՅՅԿ	1 010 113 840,7	2 090 078,1	961 867 000,0	99 830,0	
Ջարուբյունյան Վահան Միխայիլի	ՅՅԿ	721 342 000,0	1 492 565,5	431 368 000,0	600 000,0	
Աբրահամյան Արգամ Յովիկի	ԾԱՌ	643 337 650,0	1 331 162,8	450 000 000,0	350 000,0	45 000,0
Մանուկյան Արթուր Աբրահամի	ԾԱՌ	621 384 400,0	1 285 738,2	225 000 000,0	620 000,0	180 000,0
Ջարուբյունյան Արամ Խաչիկի	ՅՅԿ	614 160 688,3	1 270 791,2		1 270 174,0	555,0

ՀՀ դրամով ամենից շատ դրամական միջոց հայտարարագրել է Արայիկ Գրիգորյանը՝ 1 մլրդ 896 մլն դրամ:

Հայտարարագիր լրացրած 101 պարզամավորից 26-ը հայտարարագրել է զրոյական դրամական միջոց:


Փոխառություններ

Աժ պարզամավորների կողմից հանձնված փոխառությունների ընդհանուր ծավալը դրամային արտահայտությամբ 112.6 մլրդ դրամ է, դոլարային արտահայտությամբ՝ 232 մլն դոլար: Փոխառությունների ծավալի մեծ մասը՝ 203.8 մլն դոլարին համարժեք, պարկանում է Գագիկ Ծառուկյանին:

Ի դեպ, եթե ունեցվածքի չափը գնահատելիս հաշվի առնենք ոչ միայն դրամական միջոցները, այլ նաև փոխառությունները, ապա դոլարային միլիոնատերերի թիվը կլինի ոչ թե 11, այլ 12. ցանկին կավելանա նաև Մելիք Մանուկյանը:

ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ	ԽՄԲ	ԸՆԴՀԱՄԵՆԸ/ ԴՐԱՄ	ԸՆԴՀԱՄԵՆԸ/ ԴՈՒՍԱՐ	ԴՐԱՄ	ԴՈՒՍԱՐ	ԵՎՐՈ
Ծառուկյան Գագիկ Կոլյայի	ԾԱՌ	98 877 849 316,1	203 796 218,5	42 206 376 041,0	85 713 997,0	28 914 618,0
Արսենյան Աշոտ Եղիշեի	ՀՀԿ	11 517 165 053,4	23 737 922,1	7 925 004 895,0	7 294 071,0	102 018,0
Մանուկյան Դավիթ Անդրանիկի	ԾԱՌ	1 060 118 000,0	2 184 999,4	1 060 118 000,0	0,0	0,0
Համբարձումյան Արկաղի Ստանիսլավի	ՀՀԿ	594 303 540,0	1 224 913,5	594 303 540,0		
Հակոբյան Հակոբ Ռաֆիկի	ՀՀԿ	120 000 000,0	247 330,9	120 000 000,0		
Հարությունյան Վահան Միխայիլի	ՀՀԿ	100 000 000,0	206 109,1	100 000 000,0		
Ավագյան Կարեն Կարլենի	ՀՀԿ	72 725 170,0	149 893,2	72 725 170,0		
Ավայան Գրիգոր Սերոժի	ՀՀԿ	42 425 900,0	87 443,6	40 000 000,0	5 000,0	
Բաբլոյան Արա Սաենի	ՀՀԿ	38 886 134,0	80 147,9	23 700 000,0	31 300,0	0,0
Չոհրաբյան Նաիրա Վահանի	ԾԱՌ	32 514 374,9	67 015,1		55 900,0	10 337,0
Գորգիսյան Գևորգ Սամվելի	ԵԼԸ	24 259 000,0	50 000,0		50 000,0	
Բաբուխանյան Հայկ Բորիսի	ՀՀԿ	21 663 287,0	44 650,0		44 650,0	
Ռուստամյան Արմեն Եզնակի	ՀՅԴ	18 851 800,0	38 855,3	14 000 000,0	10 000,0	
Սաղաթեյան Արման Արմենի	ՀՀԿ	17 995 8111,4	37 091,0	0,0	37 091,0	0,0
Տոնոյան Իվետա Սասունի	ԾԱՌ	12 500 000,0	25 763,0	12 500 000,0		
Բեքարյան Կարեն Մանուկի	ՀՀԿ	5 755 670,0	11 863,0	5 755 670,0		
Մելքունյան Միքայել Սերգեյի	ԾԱՌ	4 851 800,0	10 000,0	0,0	10 000,0	0,0
Մախմուդյան Ռուստամ Զասմի	ՀՀԿ	4 451 539,0	9 175,0	4 451 539,0		
Պետրոսյան Գևորգ Վոլոդյայի	ԾԱՌ	1 990 000,0	4 101,6	1 990 000,0		
ԸՆԴՀԱՄԵՆԸ		112 568 306 395,7	232 013 492,7	52 180 924 855,0	93 252 009,0	29 026 937,0


Ի տարբերություն դրամական միջոցների՝ հանձնված փոխառությունների դեպքում դոլարայնացման մակարդակն ավելի ցածր է: ՀՀ դրամով հանձնված փոխառություններն ընդհանուրի 46,4%-ն են, դոլարով փոխառությունները՝ 40,2%, եվրոյով փոխառությունները՝ 13,4%:



Եկամուտներ

Աժ 101 պարզամավորի դրամական եկամուտները, որոնք ստացվել են 2017 թ. հունվարի 1-ից մինչև պաշտոնական պարտականություններն ստանձնելու օրը (մայիսի 18), կազմել են 17,3 մլրդ դրամ կամ 35,6 մլն դոլար: Պարզամավորները նշել են եկամտի 12 աղբյուր:

Աժ պարզամավորների եկամուտների բաշխվածությունն ըստ աղբյուրների ՀՀ դրամով



Եկամուտների մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմում ստացված վարկերը: Դա գրեթե ամբողջությամբ պայմանավորված է Գագիկ Ծառուկյանի 22.5 մլն եվրո վարկով: Նա նաև ստացել է 646 մլն դրամ շահաբաժին, 370 մլն դրամ տոկոս կամ փոխհատուցում տրված փոխառությունների դիմաց:

Ամենից շատ նվիրատվություն ստացել են ՀՀ-ական պարզամավորներ Աշոտ Արսենյանը (6 մլն դոլար) և Արկադի Համբարձումյանը (540 մլն դրամ):

Աշոտ Արսենյանը, բացի նվիրատվությունից, ստացել է 445.8 մլն դրամ որպես տրված փոխառությունների դիմաց տոկոս կամ փոխհատուցում:


Հերմինե Նաղդալյանն իր հայտարարագրում նշել է, որ այս ընթացքում ստացել է 270.3 մլն դրամի վարկ:

Բնապահպանության նախկին նախարար Արամ Հարությունյանի եկամուտներից 37.8 մլն դրամը շահաբաժինն է, ևս 7.9 մլն դրամ նա ստացել է որպես տրված փոխառությունների դիմաց տոկոս կամ փոխհատուցում:

«Ելք» խմբակցության պարզամավոր Արամ Սարգսյանի 21 մլն դրամ եկամուտն ամբողջությամբ շահաբաժին է:

Ամենից շարք եկամուտներ հայտարարագրած պատգամավորների քսանյակը

ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ	ԽՄԲ	ԸՆԴԱՄԵՆԸ/ ԴՐԱՄ	ԸՆԴԱՄԵՆԸ/ ԴՈՒԱՐ
Ծառուկյան Գագիկ Կոլյայի	ԾԱՌ	11 942 285 789,0	24 614 134,5
Արսենյան Աշոտ Եղիշեի	ՀՀԿ	3 366 419 603,9	6 938 492,2
Համբարձումյան Արկադի Ստանիսլավի	ՀՀԿ	542 083 290,0	1 117 282,8
Նաղդայան Հերմինե Միքայելի	ՀՀԿ	275 413 380,0	567 652,0
Հարությունյան Արամ Խաչիկի	ՀՀԿ	46 769 481,0	96 396,1
Աշոտյան Արմեն Գևորգի	ՀՀԿ	37 370 375,0	77 023,7
Հարությունյան Անդրանիկ Ալբերտի	ՀՀԿ	22 380 000,0	46 127,2
Սարգսյան Արամ Չավենի	ԵԼԶ	21 000 000,0	43 282,9
Շարմազանոբ Էդուարդ Հովսեփի	ՀՀԿ	18 528 656,0	38 189,2
Հակոբյան Հակոբ Ռաֆիկի	ՀՀԿ	17 879 950,0	36 852,2
Սարգսյան Արտակ Սամվելի	ՀՀԿ	16 044 070,0	33 068,3
Բաբլոյան Արա Սաենի	ՀՀԿ	13 507 531,0	27 840,2
Աբրահամյան Արգամ Հովիկի	ԾԱՌ	9 442 655,0	19 462,2
Ավագյան Կարեն Կարլենի	ՀՀԿ	8 998 275,0	18 546,3
Սարդարյան Շուշան Ալբերտի	ՀՀԿ	7 829 378,0	16 137,1
Թանդիլյան Մանե Վանյայի	ԵԼԶ	7 500 000,0	15 458,2
Հարությունյան Վահան Միխայիլի	ՀՀԿ	7 286 000,0	15 017,1
Մուրադյան Ռուզաննա Կարապետի	ՀՀԿ	6 786 070,0	13 986,7
Չոհրաբյան Նաիրա Վահանի	ԾԱՌ	6 447 506,0	13 288,9
Ստեպանյան Տիգրան Վաչիկի	ԾԱՌ	6 282 660,0	12 949,1



ԵՐԵՎԱՆ 2018